Արդեն մթնում էր. օրն անցավ անսպասելի արագ, և մեկնող արեգակն իր վերջին շողերը նվիրեց ինձ նման երազողներին, երազողներին և իրենց երազանքներից փախչողներին. . .

Երբ միայնակ ես լինում, մթությունը մեկ-մեկ անտանելի տաղտկությամբ տանջում է սիրտդ: Երբ միայնակ ես, գիրքը քո լավագույն ընկերն է, քո փոքրիկ դուռն է դեպի այն անծայրածիր աշխարհը, որի մեջ դու ո՛չ դիտորդ ես և ո՛չ մասնակից, ո՛չ տեր ես և ո՛չ ծառա. դու մասն ես այդ աշխարհի, կամ էլ, ավելի ճիշտ, այդ աշխարհն է քո մասնիկը, քո պակասությունը լրացնողը. . .

Կա մի գիրք, որը կյանքիս տարբեր շրջաններում խոսել է իմ սրտի հետ և երփներանգ գույներով ներկել սև-սպիտակ կյանքս, անշեջ լույսով ջերմացրել սառնապաղ կյանքս, անբեկանելի հույսով նորոգել հուսաբեկ կյանքս. . .

Մի՛ հարցրու ինձ այդ գրքի անունը. ես ինչպե՞ս հայտնեմ քեզ սիրելիիս անունը, ես խանդով եմ սիրում այն. միգուցե վախենում եմ, որ դու չես գնահատի նրա ապշեցուցիչ մեծությունը, չես թափանցի նրա խորին խորքերը, այն չի բարձացնի քեզ երկինքների երկինք և չի իջեցնի անդունդների խորքերը, այլ կլինի քեզ համար ուղղակի գիրք՝ ինչպես և այլ բազմաթիվ գրքերը: Հուսով եմ, որ դու մի օր ինձ կհասկանաս, թեև սիրուց խենթացածին միայն խենթը կհասկանա. . .

Այս Գրքում մի ընտանիք կտեսնես, մի ընտանիքի պատմություն, մեծ և անզուգական սիրո պատմություն, որի մասնակիցներն ենք ես և դու: Այս Գրքի միջոցով Սերն ինձ հայտնեց Իր խորհրդավոր դեմքը, Իր պատկերը դրոշմեց իմ սրտում և հեռացավ ինձնից, թաքնվեց անեզր Տիեզերքում՝ թողնելով ինձ միայնակ և դարձնելով իմ կյանքը մի մեծ փնտրտուք. .

Ինձ մնաց միայն մի փոքր դուռ՝ անկողպեք և անփական, որի շեմը մաշում եմ օրեցօր, սակայն դեռևս վախենում եմ մտնել. միգուցե անպատրաստ գտնվեմ, ինչպես և գրված է իմ սիրելի Գրքում, անանման ԳՐՔՈՒՄ. . .